Luys Lույս®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ - 2026

Հաշվետվություն «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից հրապարակված զեկույցի (2026թ.) հիման վրա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 1

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 3

2.ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ 7

3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 9

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ 13

ԱՄՓՈՓՈՒՄ 16

ՆԱԽԱԲԱՆ

Արդի փուլում հասարակության զարգացման կարևորագույն նախապայմաններից է տնտեսական ազատության ապահովումը, որը մշտապես պետք է լինի պետական կառավարման առաջնահերթությունների շարքում: Որպես կանոն, բոլոր երկրներում խրախուսվում է, որպեսզի տնտեսական ազատության խնդիրների ուսումնասիրմամբ և դրանց քանակական գնահատմամբ ու ժամանակային փոփոխությունների վերլուծությամբ զբաղվեն ինչպես պետական, այնպես էլ անկախ հետազոտական կառույցները: Այնուամենայնիվ, միջերկրային և միջժամանակային համադրումների առումով առանձնակի կարևորվում են միջազգային հեղինակավոր կազմակերպությունների վերլուծությունները, քանի որ դրանք սովորաբար հիմնվում են համընդհանուր ընդունված մեթոդաբանության վրա և լայնորեն ճանաչված են մասնագիտական շրջանակներում:

Մասնավորապես, հասարակական զարգացման տարբեր ոլորտներում քանակական գնահատումների և համեմատական վերլուծության առումով կարևոր նշանակություն ունեն միջազգային ինդեքսները, որոնք հնարավորություն են տալիս ոչ միայն համեմատել տարբեր երկրների համակարգերի արդյունավետությունը, այլև բացահայտել այն ինստիտուցիոնալ ու քաղաքական գործոնները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են երկարաժամկետ աճին ու բարեկեցությանը: Այդպիսի ինդեքսների թվին է պատկանում տնտեսական ազատության ինդեքսը (այսուհետ՝ ՏԱԻ), որը հաշվարկվում է միջազգային հեղինակավոր կառույցներից մեկի՝ «Հերիթեյջ» հիմնադրամի (The Heritage Foundation) կողմից և հանդիսանում է 1995 թվականից ի վեր հրապարակվող «Տնտեսական ազատության ինդեքս» ամենամյա զեկույցների հիմքը:

Զեկույցների շարքն օրերս համալրվեց 32-րդ ամենամյա զեկույցով՝ «Տնտեսական ազատության ինդեքս - 2026»[1] (այսուհետ՝ Զեկույց): Զեկույցում դիտարկված է 184 երկիր, որոնցից 176-ի համար հաշվարկված է տնտեսական ազատության ինդեքսը՝ 2024թ. հուլիսի 1-ից 2025թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի տվյալների հիման վրա: Զեկույցն ավանդաբար սկզբում անդրադարձել է համաշխարհային տնտեսական ազատության միտումներին և տարածաշրջանային ու առանձին երկրների մակարդակներում առկա տնտեսական մարտահրավերներին ու ձեռքբերումներին: Զեկույցում առանձնակի ընդգծվում է այն հանգամանքը, որ շարունակում են զգալի լինել տնտեսական ազատության ասպարեզում երկրների միջև տարբերությունները: Նշվում է նաև, որ վերջին

[1] Զեկույցը հասանելի է հետևյալ հղումով՝
https://static.heritage.org/index/pdf/2026/2026_indexofeconomicfreedom.pdf

ժամանակներում համաշխարհային տնտեսությունը ստիպված է գործել բարդ ու անորոշ միջավայրում, իսկ տնտեսական ազատության (մասնավորապես, շուկաների ազատ գործունեության և մրցակցային միջավայրի առկայության) վրա բացասական ներգործություն են ունեցել ինչպես աշխարհաքաղաքական լարվածություններն ու ռազմական հակամարտությունները, այնպես էլ մի շարք երկրներում վարվող քաղաքականությունները: Միաժամանակ, Զեկույցում նշվում է՝ չնայած այդ հանգամանքին, շարունակում է պահպանվել տնտեսական ազատության մակարդակի և տնտեսական աճի, ներդրումային ակտիվության ու ընդհանուր բարեկեցության բարձրացման միջև դրական ուժեղ կապը:

2026-ին տնտեսական ազատության համաշխարհային ինդեքսը կազմել է 59.9 միավոր՝ նախորդ տարվա համեմատ աճելով 0.2 միավորով: Այնուամենայնիվ, քանի որ այն դեռևս չի հասել «չափավոր ազատ» երկրների նվազագույն շեմին, համաշխարհային տնտեսությունը շարունակում է դասակարգվել որպես «հիմնականում ոչ ազատ»:

Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսը կազմել է 67.1 միավոր՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1.7 միավորով: Ըստ ՏԱԻ-ի կազմված համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանը զբաղեցնում է 52-րդ հորիզոնականը՝ նախորդ տարվա համեմատ գրանցելով դիրքի բարելավում՝ 5 հորիզոնականով:

Կարևորելով զեկույցների շարքի նշանակությունը՝ «Լույս» հիմնադրամը յուրաքանչյուր տարվա զեկույցի վերաբերյալ հրապարակում է վերլուծական հաշվետվություն[2], որտեղ ներկայացվում են տնտեսական ազատության վերաբերյալ հիմնական միտումները, զարգացումները և համեմատական տվյալները՝ ինչպես համաշխարհային մակարդակում, այնպես էլ Հայաստանի համար: Հաշվետվությունները սկսվում են տնտեսական ազատության ինդեքսի ընդհանուր նկարագրությամբ, ներկայացվում են դրա մեթոդաբանական հիմքերը և հաշվարկման առանձնահատկությունները: Այնուհետև անդրադարձ է կատարվում հաշվետու ժամանակահատվածում ՏԱԻ-ի վերաբերյալ համաշխարհային տեղեկատվությանը, ինչպես նաև զեկույցում արծարծված գլոբալ հիմնահարցերին (այդ թվում՝ տնտեսական ազատության ժամանակակից միտումներին, տնտեսական մրցակցության առումով երկրների միջև առկա տարբերություններին և այլն): Հաջորդիվ ներկայացվում է Հայաստանի ՏԱԻ-ն, դրա բաղադրիչները և վերջին տարիների դինամիկան: Առանձին բաժին է նվիրվում Հայաստանի և որոշ երկրների տարածաշրջանային համադրումներին:

[2] 2019-ից ի վեր կատարված բոլոր վերլուծությունները հասանելի են «Լույս» հիմնադրամի պաշտոնական կայքում՝ https://www.luys.am/...drangesearch=0:

Հաշվետվություններն ավարտվում են վերլուծության կարևոր արդյունքների ու եզրահանգումների հակիրճ ներկայացմամբ:

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսական ազատության ինդեքսը տնտեսական ազատության գնահատման ագրեգացված ցուցանիշ է, որը հաշվարկվում է որպես 12 ենթաինդեքսների միջին թվաբանական: Ընդ որում, այդ ենթաինդեքսները դասակարգվում են 4 խմբում՝ **օրենքի գերակայություն**, **պետական հատվածի կշիռ**, **կարգավորումների արդյունավետություն** և **շուկայի բացություն**: Յուրաքանչյուր խմբում ներառված է 3 ենթաինդեքս (Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Տնտեսական ազատության ինդեքսի կառուցվածքը



ՏԱԻ-ի 12 ենթաինդեքսները որոշակի վիճակագրական ցուցանիշների ագրեգացման հիման վրա գնահատվում և ստանդարտացվում են 0-100 միջակայքում, որից հետո հաշվարկվում է ընդհանուր ինդեքսը՝ որպես դրանց միջին թվաբանական, որը, բնականաբար, նույնպես արժեքներ է ընդունում 0-100 միջակայքում: Ըստ ՏԱԻ-ի արժեքի երկրները խմբավորվում են հինգ խմբում՝

- տնտեսապես ***«ազատ»*** երկրներ՝ ՏԱԻ-ի 80 միավոր և ավելի արժեքներ,
- տնտեսապես ***«հիմնականում ազատ»*** երկրներ՝ ՏԱԻ-ի 70-79.9 միջակայք,
- տնտեսապես ***«չափավոր ազատ»*** երկրներ՝ ՏԱԻ-ի 60-69.9 միջակայք,
- տնտեսապես ***«հիմնականում ոչ ազատ»*** երկրներ՝ ՏԱԻ-ի 50-59.9 միջակայք,
- տնտեսապես ***«ճնշված»*** երկրներ՝ ՏԱԻ-ի 49.9 միավոր և պակաս արժեքներ:

Հակիրճ նկարագրենք ՏԱԻ-ի խմբերից յուրաքանչյուրում ներառված ենթաինդեքսները:

ԽՈՒՄԲ 1 - ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Առաջին խմբի՝ «Օրենքի գերակայության» մեջ ներառված է երեք ենթաինդեքս:

1. «Սեփականության իրավունքի պաշտպանություն» ենթաինդեքսով գնահատվում է, թե երկրի օրենսդրական դաշտը որքանո՞վ է հնարավորություն ընձեռում ձեռք բերել, տիրապետել և տնօրինել մասնավոր սեփականություն, որքանո՞վ են այդ իրավունքները գործող օրենսդրությամբ երաշխավորված, և արդյո՞ք իշխանությունն ապահովում է այդ օրենսդրական դաշտի նորմալ գործողությունը:

Ենթաինդեքսը հետևյալ երեք ենթագործոնների գնահատմամբ ստացվող արժեքների միջին թվաբանական է՝

- *մասնավոր (նյութական) սեփականության բռնագրավման ռիսկ,*
- *մտավոր սեփականության պաշտպանվածության մակարդակ,*
- *պայմանագրերի, սեփականության իրավունքի և օրենքների կիրառելիություն:*

2. «Արդարադատության արդյունավետություն» ենթաինդեքսով գնահատվում է երկրում քաղաքացիների իրավունքների երաշխավորվածության, ինչպես նաև հակաօրինական գործողություններից դրանց պաշտպանվածության մակարդակը: Այն հաշվարկվում է որպես հետևյալ երեք ենթագործոնների գնահատմամբ ստացվող արժեքների միջին թվաբանական՝

- *դատական համակարգի անկախություն,*
- *դատական գործընթացի որակ,*
- *հանրային ծառայությունների որակի և քաղաքացիական ծառայության անկախության վերաբերյալ ընկալումներ:*

3. «Կոռուպցիայի բացակայություն» ենթաինդեքսը հաշվարկվում է որպես հետևյալ երեք ենթագործոնների գնահատմամբ ստացվող արժեքների միջին թվաբանական՝

- *կոռուպցիայի ընկալման մակարդակ,*
- *կաշառակերության ռիսկ,*
- *կոռուպցիայի (ներառյալ էլիտաների և այլ խմբերի կողմից պետության «զավթումը») վերահսկում:*

ԽՈՒՄԲ 2 - ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԿՇԻՌ

1. «Հարկային բեռ»: Այս ենթաինդեքսով գնահատվում է, թե կառավարությունը հարկային բեռի միջոցով որքանո՞վ է սահմանափակում տնտեսական ակտիվությունը: Այն հետևյալ երեք ենթագործոնների գնահատմամբ ստացվող արժեքների միջին թվաբանականն է՝

- *եկամտային հարկի դրույքաչափի վերին սահման,*
- *շահութահարկի դրույքաչափի վերին սահման,*
- *հարկեր/ՀՆԱ հարաբերակցություն:*

2. «Պետական ծախսեր» ենթաինդեքսը նպատակ ունի գնահատել, թե տնտեսական ազատությունը որքանո՞վ է սահմանափակվում պետական ծախսերի պատճառով: Համարվում է, որ պետական ծախսերի բարձր մակարդակը կարող է նվազեցնել մասնավոր հատվածի տնտեսական ակտիվությունը: Ենթաինդեքսը հանդիսանում է *«պետական ծախսեր/ՀՆԱ»* ցուցանիշի վերջին երեք տարիների արժեքների միջին մեծության ոչ գծային ստանդարտացման արդյունք:

3. «Հարկաբյուջետային կայունություն» ենթաինդեքսը հաշվարկվում է որպես հետևյալ ենթագործոնների գնահատմամբ ստացվող արժեքների կշռված միջին՝

- *պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցության վերջին երեք տարիների միջին արժեք* (կշիռը ենթաինդեքսի գնահատականում՝ 80%),
- *պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցություն* (կշիռը ենթաինդեքսի գնահատականում՝ 20%):

ԽՈՒՄԲ 3 - ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

1. «Գործարարության ազատություն» ենթաինդեքսը ցույց է տալիս, թե երկրի իրավակարգավորումների և ենթակառուցվածքների համակարգերը որքանո՞վ են նպաստում ձեռնարկատիրական արդյունավետ գործունեություն ծավալելու հնարավորություններին: Այն հաշվարկվում է որպես հետևյալ չորս ցուցանիշների միջին թվաբանական՝

- *էլեկտրաէներգիայի հասանելիություն,*
- *գործարար միջավայրի ռիսկայնություն,*
- *իրավակարգավորումների որակ,*
- *տնտեսական գործընթացներում կանանց ներգրավվածություն:*

2. «Աշխատանքի ազատություն» ենթաինդեքսը հետևյալ ինը ենթագործոնների գնահատմամբ ստացվող արժեքների միջին թվաբանականն է՝

- *նվազագույն աշխատավարձ,*
- *արհմիությունների իրավունքներ,*
- *ամենամյա վճարովի արձակուրդի հասանելիություն,*
- *հաստիքի կրճատման պատճառով աշխատանքից ազատման վերաբերյալ ծանուցման ժամկետ,*
- *հաստիքի կրճատման պատճառով աշխատանքից ազատման պարտադիր վճարի չափ,*
- *աշխատանքի արտադրողականություն,*
- *աշխատուժի մասնակցության գործակից,*
- *արտաժամյա աշխատանքի սահմանափակումներ,*
- *հաստիքի կրճատման պատճառով աշխատանքից ազատման իրավական կարգավորման առկայություն:*

3. «Դրամավարկային ազատություն»: Այս ենթաինդեքսը բնութագրում է գների կայունության ապահովման հարցում դրամավարկային քաղաքականություն իրականացնող մարմինների ազատությունը: Ենթաինդեքսի հաշվարկման համար օգտագործվում են հետևյալ երկու ենթագործոնները՝

- *գնաճի տեմպ (վերջին երեք տարիների կշռված միջինը),*
- *պետության կողմից գների արհեստական վերահսկման մեխանիզմի առկայություն:*

ԽՈՒՄԲ 4 - ՇՈՒԿԱՅԻ ԲԱՑՈՒԹՅՈՒՆ

1. «Առևտրի ազատություն» ենթաինդեքսը արտահայտում է միջազգային շուկաներում ազատ առևտուր իրականացնելու գործում տնտեսական գործակալների հնարավորությունները: Դրա հաշվարկման համար օգտագործվում են հետևյալ երկու ցուցանիշները՝

- *մաքսատուրքի միջին կշռված դրույքաչափ,*
- *ոչ մաքսային խոչընդոտների որակական գնահատական:*

2. «Ներդրումային ազատություն» ենթաինդեքսով գնահատվում է ներդրումային կապիտալի շարժի վրա պետականորեն դրված սահմանափակումների մակարդակը: Այն հաշվարկելիս 100 միավոր առավելագույն արժեքից յուրաքանչյուր սահմանափակման (ենթագործոնի) համար հանվում են տուգանային միավորներ՝ կախված դրա «կարևորության» աստիճանից:

3. «Ֆինանսական ազատություն» ենթաինդեքսով «չափվում է» բանկային գործունեության արդյունավետության և պետական վերահսկողությունից ու

միջամտությունից անկախության աստիճանը: Դրա հաշվարկը հիմնված է հետևյալ ցուցանիշների վրա՝

- *ֆինանսական ծառայությունների պետական կարգավորման աստիճան,*
- *բանկերի և այլ ֆինանսական ինստիտուտների գործունեության մեջ պետական միջամտության (ուղղակի կամ անուղղակի տնօրինմամբ) աստիճան,*
- *վարկերի տեղաբաշխման վրա կառավարության ազդեցություն,*
- *ֆինանսական և կապիտալի շուկաների զարգացածություն,*
- *միջազգային մրցակցության առումով բացություն:*

Նշենք, որ յուրաքանչյուր տարվա ՏԱԻ-ի հաշվարկման համար դիտարկվում են դրան նախանախորդ տարվա երկրորդ կիսամյակի և նախորդ տարվա առաջին կիսամյակի տվյալները:

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

2026 թվականի զեկույցը վերաբերում է 2024 թվականի հուլիսի 1-ից մինչև 2025 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածին: Դրանում ուսումնասիրված է 184 երկիր, որոնցից միայն 176 երկրի համար է հաշվարկվել ՏԱԻ, քանի որ մնացած 8 երկրի համար 12 ենթաինդեքսներից ոչ բոլորն է հնարավոր եղել հաշվարկել:

Համաձայն Զեկույցի՝ տնտեսական ազատության համաշխարհային միջին միավորը նախորդ տարվա համեմատ աճել է 0.2 միավորով՝ հասնելով 59.9-ի: Այնուամենայնիվ, համաշխարհային տնտեսությունը, որպես ամբողջություն, մնում է *«հիմնականում ոչ ազատ»*, չնայած այն ընդհուպ մոտեցել է հաջորդ՝ *«չափավոր ազատ»* խմբի նվազագույն շեմին (մինչև 2022 թվականը համաշխարհային տնտեսությունը դասակարգվել է որպես *«չափավոր ազատ»*):

Համաձայն Զեկույցի՝ գլոբալ առումով հարկաբյուջետային կայունությունը շարունակել է վատթարանալ: Շատ երկրներում աճող բյուջետային պակասուրդն ու պետական պարտքը նվազեցրել են և առաջիկայում ևս կնվազեցնեն ընդհանուր արտադրողականության աճը՝ տնտեսական աճն արագացնելու փոխարեն ի վերջո հանգեցնելով դանդաղման:

Ըստ Զեկույցի՝ 2026-ի համար կատարված ուսումնասիրությունները շարունակում են հաստատել, որ տնտեսական ազատության բարձր մակարդակը սերտորեն կապված է ինչպես բարեկեցության, այնպես էլ տնտեսական զարգացման (այն գնահատվում է ոչ միայն տնտեսական աճի ցուցանիշներով, այլև այնպիսի գործոններով, ինչպիսիք են կյանքի տևողությունը, առողջապահության և կրթության հասանելիությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունը,

ժողովրդավարական ինստիտուտների կայունությունը և այլ սոցիալական բնութագրիչներ) հետ: Վիճակագրական տվյալները վկայում են, որ բնակչության կենսամակարդակն արտահայտող մեկ շնչի հաշվով եկամուտները տնտեսապես *«ազատ»*, *«հիմնականում ազատ»* և *«չափավոր ազատ»* երկրներում միջին հաշվով ավելի քան կրկնակի գերազանցում են մնացած երկրների և ավելի քան եռակի՝ տնտեսապես *«ճնշված»* երկրների ցուցանիշին:

Ինչպես երևում է Գծապատկեր 2-ից՝ ըստ 2026թ. ՏԱԻ-ի տնտեսապես *«ազատ»* է 4 երկիր (2025-ին խմբում 3 երկիր էր): *«Հիմնականում ազատ»* և *«չափավոր ազատ»* երկրների թիվը համապատասխանաբար 27 և 58 է: Դիտարկված երկրների մնացած մասը (87 երկիր) ունի 60-ից ցածր ՏԱԻ: Դրանցից 57-ը *«հիմնականում ոչ ազատ»* են, իսկ 30-ը՝ *«ճնշված»*:

Գծապատկեր 2. Տնտեսական ազատության աստիճանն աշխարհում 2026 թվականին՝ ըստ «Հերիթեյջ» հիմնադրամի դասակարգման, երկիր



Ըստ ՏԱԻ-ի կազմվող համաշխարհային վարկանիշային աղյուսակի՝ առաջատար եռյակը նախորդ տարվա համեմատ չի փոխվել: Աղյուսակը 84.4 միավոր ՏԱԻ-ով գլխավորում է Սինգապուրը: Երկրորդ տեղում Շվեյցարիան է՝ 83.7 միավորով, իսկ երրորդը Իռլանդիան է՝ 83.3 միավորով: Տնտեսապես *«ազատ»* չորրորդ երկիրն Ավստրալիան է՝ 80.1 միավորով: Աղյուսակի ստորին եռյակը նույնպես չի փոխվել՝ 174-րդ երկիրը Վենեսուելան է 27.3 միավորով, 175-րդը՝ Կուբան՝ 25.2 միավորով և վերջինը՝ Հյուսիսային Կորեան՝ 3.1 միավորով:

Գծապատկեր 3-ում ներկայացված են աշխարհի հինգ տարածաշրջաններում 2024-2026թթ. ՏԱԻ-ի միջին գնահատականները:

Գծապատկեր 3. ՏԱԻ-ի արժեքները ՀՀ-ում, աշխարհում և տարբեր տարածաշրջաններում, 2024-2026թթ.



Ամենաբարձր միջին ՏԱԻ (68.9 միավոր) ունեցող տարածաշրջանը դարձյալ (ինչպես և նախորդ տարիներին) Եվրոպան է, որի միջին ինդեքսը նախորդ տարվա համեմատ ավելացել է 0.4 միավորով: Ի դեպ, հինգ տարածաշրջաններից երեքում ՏԱԻ-ն աճել է, իսկ «Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա» և «Անդրսահարյան Աֆրիկա» տարածարջաններում այն մնացել է անփոփոխ:

2026-ին ոչ մի տարածաշրջան տնտեսապես *«ազատ»* կամ *«հիմնականում ազատ»* չէ: Աշխարհի հինգ տարածաշրջաններից միայն մեկը՝ «Եվրոպան» է *«չափավոր ազատ»*: Մնացած տարածաշրջանները *«հիմնականում ոչ ազատ»* են:

Հայաստանն ընդգրկված է «Եվրոպա» տարածաշրջանում և ՏԱԻ-ով տարածաշրջանի միջին գնահատականին զիջում է 1.8 միավորով:

3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի 2026-ի ՏԱԻ-ն 67.1 միավոր է՝ նախորդ տարվա ցուցանիշից 1.7 միավորով ավելի:

Ըստ ՏԱԻ-ի կազմված համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանը զբաղեցնում է 52-րդ հորիզոնականը: Նախորդ տարվա համեմատ երկրի դիրքը բարելավվել է 5 հորիզոնականով:

Հայաստանը հինգ տարի շարունակ դասակարգվում է որպես տնտեսապես *«չափավոր ազատ»* երկիր, իսկ 2021-ին (ինչպես նաև 2017-ին և 2020-ին) մեր երկիրն ընդգրկված է եղել տնտեսապես *«հիմնականում ազատ»* երկրների խմբում:

Գծապատկեր 4. ՏԱԻ-ն Հայաստանում և ՀՀ դիրքը՝ ըստ ՏԱԻ-ի, 2017-2026թթ.



Աղյուսակ 1-ում ներկայացված են Հայաստանի ՏԱԻ-ի ենթաինդեքսները 2025 և 2026 թվականներին:

Աղյուսակ 1. ՏԱԻ-ն և դրա ենթաինդեքսները ՀՀ-ում, 2025-2026թթ.

		2025թ.	**2026թ.**	Փոփոխությունը (+/-)
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ		65.4	67.1	1.7
Օրենքի գերակայություն	*Սեփականության իրավունքի պաշտպանություն*	*49.9*	***48.6***	*-1.3*
	Արդարադատության արդյունավետություն	*31.3*	***31.4***	*0.1*
	Կոռուպցիայի բացակայություն	*50.4*	***51.8***	*1.4*
Պետական հատվածի կշիռ	*Հարկային բեռ*	*88.1*	***87.2***	*-0.9*
	Պետական ծախսեր	*77.6*	***77.5***	*-0.1*
	Հարկաբյուջետային կայունություն	*81.3*	***84.1***	*2.8*

Կարգավորումների արդյունավետություն	Գործարարության ազատություն	73.0	72.9	↓	-0.1
	Աշխատանքի ազատություն	59.2	59.2	●	0.0
	Դրամավարկային ազատություն	72.2	77.2	↑	5.0
Շուկայի բացություն	Առևտրի ազատություն	72.0	75.0	↑	3.0
	Ներդրումային ազատություն	70.0	70.0	●	0.0
	Ֆինանսական ազատություն	60.0	70.0	↑	10.0

12 ենթաինդեքսներից երկուսի գծով Հայաստանը համարվում է տնտեսապես *«ազատ»* երկիր, վեցի գծով՝ *«հիմնականում ազատ»*, երկուսի գծով՝ *«հիմնականում ոչ ազատ»*, երկուսի գծով՝ *«ճնշված»*: Այս տարի ևս (ինչպես և 2025-ին), **բացի այն, որ Հայաստանը երկու ենթաինդեքսների՝ «Սեփականության իրավունքի պաշտպանության» և «Արդարադատության արդյունավետության» գծով համարվում է տնտեսապես *«ճնշված»* երկիր, այդ ենթաինդեքսներն ավելի ցածր են, քան դրանց համաշխարհային միջինը** (համապատասխանաբար 52.2 և 48.2 միավոր):

Այդ երկու ենթաինդեքսներն էլ ներառված են նույն՝ «Օրենքի գերակայություն» խմբում, որը Հայաստանի համար շարունակում է մնալ ենթաինդեքսների ամենաանբարենպաստ խումբը: Ի դեպ, որպես Հայաստանում տնտեսական ազատության առումով թույլ կողմ արդեն մի քանի տարի շարունակ, տարբեր ձևակերպումներով, նշվում է դատական համակարգի ցածր արդյունավետությունը: Համաձայն Զեկույցի՝ չնայած արձանագրված որոշակի առաջընթացին՝ Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի և դատական համակարգի բարեփոխումները դեռևս չեն վերածվել կայուն ինստիտուցիոնալ հիմքերի, ինչն ընդգծում է այդ ոլորտներում խորքային և շարունակական խնդիրների առկայությունը:

«Օրենքի գերակայություն» խմբի առաջին ենթաինդեքսը՝ «Սեփականության իրավունքի պաշտպանությունը», նախորդ տարվա համեմատ էականորեն նվազել է՝ 1.3 միավորով և համաշխարհային միջինին 2026-ին ավելի մեծ չափով է զիջում, քան 2025-ին: Ի դեպ, այս ենթաինդեքսը ձևավորվել է Հայաստանում «մասնավոր (նյութական) սեփականության

բռնագրավման ռիսկ», «մտավոր սեփականության պաշտպանվածության մակարդակ» և «պայմանագրերի, սեփականության իրավունքի և օրենքների կիրառելիություն» գործոնների գնահատման միջոցով: Այսինքն՝ Զեկույցը զգալի հետընթաց է արձանագրել այս ուղղություններում:

«Պետական հատվածի կշիռ» խմբի մեջ ներառված «Հարկային բեռ» ենթաինդեքսը 2025-ի համեմատ նվազել է 0.9 միավորով: Քանի որ այս ենթաինդեքսի հաշվարկման համար օգտագործվող երեք ցուցանիշներից երկուսը՝ եկամտային հարկի դրույքաչափի վերին սահմանը և շահութահարկի դրույքաչափի վերին սահմանը նախորդ տարվա համեմատ չեն փոխվել, վստահությամբ կարելի է ասել, որ ենթաինդեքսի նվազումը բացառապես պայմանավորված է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշով:

Ենթաինդեքսների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նախորդ տարվա համեմատ ՏԱԻ-ի աճը հիմնականում պայմանավորված է երեք ենթաինդեքսների գծով արձանագրված շոշափելի աճով: Մասնավորապես, «Առևտրի ազատություն» ենթաինդեքսն աճել է 3.0, «Դրամավարկային ազատությունը»՝ 5.0, իսկ «Ֆինանսական ազատությունը»՝ միանգամից 10.0 միավորով: «Ֆինանսական ազատություն» ենթաինդեքսի աճը մեծապես պայմանավորված է վերջին տարիներին ֆինանսական (բանկային) ծառայությունների ոլորտում գրանցված աննախադեպ զարգացումներով:

«Կարգավորումների արդյունավետություն» խմբի ենթաինդեքսներից «Աշխատանքի ազատությունը» նախորդ տարվա համեմատ չի փոխվել, իսկ «Գործարարության ազատություն» ենթաինդեքսը փոքր-ինչ՝ 0.1 միավորով նվազել է: «Աշխատանքի ազատություն» ենթաինդեքսի անփոփոխ մնալը մտահոգիչ է, քանի որ դրա հաշվարկման կարևոր ցուցանիշներից է աշխատանքի արտադրողականությունը, որի կապակցությամբ պետական պաշտոնյաները բազմիցս շեշտում են, որ այն վերջին տարիներին կտրուկ աճել է: Մասնավորապես, ըստ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանի՝ 2024 թվականին այդ աճը համարժեք է եղել 2012–2017 թվականների ամբողջ ժամանակահատվածի աճին[3], իսկ 2021 թվականի համեմատ արտադրողականությունը գրեթե կրկնապատկվել է[4]: Այս պարագայում, եթե հիմք ընդունվեն նախարարի հայտարարությունները, ապա ստացվում է, որ «Աշխատանքի ազատություն» ենթաինդեքսի մնացած ցուցանիշներն այնքան են նվազել, որ այդ նվազումն ամբողջությամբ չեզոքացրել է աշխատանքի արտադրողականության կտրուկ աճը: Մինչդեռ, դրանք ամրագրված են օրենսդրությամբ և դիտարկվող ժամանակահատվածում չեն փոխվել:

[3] https://finport.am/full_news.php?id=53373&utm&lang=1
[4] https://bm.ge/ru/news/armeniia-blizka-k-udvoeniiu-proizvoditelnosti-truda-ministr-otcitalsia-ob-uspexax

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Ստորև ներկայացվում են Հայաստանի և որոշ երկրների տարածաշրջանային համադրումները:

Ինչպես երևում է Աղյուսակ 2-ից, «Եվրոպա» տարածաշրջանի 44 երկրներ ընդգրկող վարկանիշային աղյուսակում Հայաստանը զբաղեցնում է 28-րդ հորիզոնականը՝ նախորդ տարվա համեմատ 2 հորիզոնականով բարելավելով իր վարկանիշային դիրքը: Աղյուսակից պարզ է դառնում, որ, Հայաստանից բացի, եվրոպական տարածաշրջանի ևս 15 երկրում ՏԱԻ-ի աճ է արձանագրվել:

Աշխարհի չորս տնտեսապես *«ազատ»* երկրներից 2-ը (Շվեյցարիան և Իռլանդիան) Եվրոպայի տարածաշրջանից են: Տարածաշրջանի 15 երկրներ *«հիմնականում ազատ»* են, 23-ը՝ *«չափավոր ազատ»*, 3-ը՝ *«հիմնականում ոչ ազատ»*, 1-ը՝ *«ճնշված»*: Տարածաշրջանի առաջատար եռյակը չի փոխվել՝ Շվեյցարիա, Իռլանդիա և Լյուքսեմբուրգ: Հետնապահները նույնպես նախորդ տարվա համեմատ նույնն են՝ Մոլդովա, Թուրքիա, Ռուսաստան և Բելառուս:

Աղյուսակ 2. ՏԱԻ-ին Եվրոպայի երկրներում, 2025-2026թթ.

N	Երկիր	ՏԱԻ 2025	ՏԱԻ 2026	ՏԱԻ-ի փոփոխություն (+/-)	Դիրք 2025	Դիրք 2026	Դիրքի բարելավում/ վատթարացում (+/-)
1	Շվեյցարիա	83.7	83.7	0.0	2	2	0
2	Իռլանդիա	83.1	83.3	0.2	3	3	0
3	Լյուքսեմբուրգ	79.5	79.7	0.2	5	6	-1
4	Դանիա	79.1	79.0	-0.1	7	7	0
5	Նորվեգիա	78.3	78.8	0.5	9	8	1
6	Էստոնիա	78.9	78.7	-0.2	8	9	-1
7	Նիդեռլանդներ	78.2	78.5	0.3	10	10	0
8	Շվեդիա	77.9	77.8	-0.1	12	11	1
9	Ֆինլանդիա	77.0	76.6	-0.4	13	13	0
10	Լիտվա	74.6	75.3	0.7	16	15	1
11	Իսլանդիա	72.8	75.0	2.2	21	16	5
12	Կիպրոս	73.2	74.1	0.9	19	18	1
13	Չեխիա	72.9	73.2	0.3	20	20	0
14	Գերմանիա	71.6	71.7	0.1	22	24	-2
15	Լատվիա	71.4	71.6	0.2	24	25	-1
16	Պորտուգալիա	70.5	71.2	0.7	25	27	-2
17	Մեծ Բրիտանիա	69.3	70.4	1.1	33	29	4
18	Ավստրիա	69.7	69.8	0.1	32	33	-1
19	Սլովենիա	68.3	69.7	1.4	43	34	9
20	Վրաստան	69.0	69.6	0.6	35	35	0
21	Բելգիա	69.0	69.2	0.2	34	36	-2
22	Բուլղարիա	68.8	68.9	0.1	37	38	-1
23	Լեհաստան	67.1	68.5	1.4	44	40	4
24	Մալթա	66.8	68.2	1.4	48	43	5
25	Ալբանիա	66.6	68.0	1.4	49	46	3
26	Սլովակիա	68.4	67.7	-0.7	42	47	-5
27	Խորվաթիա	68.7	67.5	-1.2	39	49	-10
28	**Հայաստան**	**65.4**	**67.1**	**1.7**	**57**	**52**	**5**
29	Իսպանիա	66.3	66.8	0.5	53	53	0
30	Ռումինիա	66.5	65.4	-1.1	51	58	-7
31	Սերբիա	64.4	65.0	0.6	63	62	1
32	Ֆրանսիա	64.4	64.6	0.2	62	65	-3
33	Ադրբեջան	62.5	64.3	1.8	75	67	8
34	Չեռնոգորիա	63.8	63.8	0.0	68	70	-2
35	Իտալիա	60.9	63.3	2.4	81	73	8
36	Հյուսիսային Մակեդոնիա	63.2	63.3	0.1	73	74	-1
37	Հունաստան	60.6	63.2	2.6	83	75	8
38	Բոսնիա և Հերցեգովինա	63.5	63.1	-0.4	70	76	-6
39	Հունգարիա	61.4	62.5	1.1	79	79	0
40	Կոսովո	61.7	62.4	0.7	78	81	-3
41	Մոլդովա	58.3	58.1	-0.2	97	101	-4
42	Թուրքիա	56.1	55.0	-1.1	111	117	-6
43	Ռուսաստան	51.6	50.3	-1.3	135	145	-10
44	Բելառուս	48.9	49.1	0.2	152	150	2

ԵԱՏՄ անդամ երկրներից ամենամեծ ՏԱԻ-ն ունի Հայաստանը (Գծապատկեր 5): Այս տարի, բացի Ռուսաստանի Դաշնությունից, մնացած բոլոր ԵԱՏՄ անդամ երկրների ՏԱԻ-ն աճել է: Հայաստանից բացի, դիրքի բարելավում են ունեցել նաև

Բելառուսը (2 հորիզոնականով) և Ղրղզստանը (1 հորիզոնականով): ԵԱՏՄ անդամ երկրներից ոչ մեկի խումբը նախորդ տարվա համեմատ չի փոխվել. Հայաստանը և Ղազախստանն ընդգրկված են *«չափավոր ազատ»* տնտեսություններով երկրների խմբում: Ռուսաստանի Դաշնությունը և Ղրղզստանը տնտեսապես *«հիմնականում ոչ ազատ»* երկրներ են, իսկ Բելառուսը՝ *«ճնշված»* երկրների խմբում է:

Գծապատկեր 5. ԵԱՏՄ երկրների ՏԱԻ-ն և վարկանիշային աղյուսակում դիրքը, 2024-2026թթ.



Գծապատկեր 6-ում ներկայացված է Հայաստանի և հարևան չորս երկրների վերաբերյալ համեմատական տեղեկատվությունը: **Հարևան երկրներից Հայաստանը զիջում է միայն Վրաստանին, որն ունի 69.6 միավոր ՏԱԻ և համաշխարհային վարկանիշային աղյուսակում զբաղեցնում է 35-րդ հորիզոնականը**: Հայաստանին հաջորդում է համաշխարհային վարկանիշային աղյուսակի 67-րդ հորիզոնականում գտնվող Ադրբեջանը՝ 64.3 ՏԱԻ-ով: Տարածաշրջանում ՏԱԻ-ի՝ մեծությամբ չորրորդ երկիրը Թուրքիան է՝ 55.0 միավոր և համաշխարհային վարկանիշային աղյուսակի 117-րդ հորիզոնական: 41.8 միավոր ՏԱԻ-ով վերջին տեղում Իրանն է, որը համաշխարհային վարկանիշային աղյուսակում զբաղեցնում է 169-րդ հորիզոնականը:

Գծապատկեր 6. ՀՀ-ի և հարևան երկրների ՏԱԻ-ն և վարկանիշային աղյուսակում դիրքը, 2024-2026թթ.



Աղյուսակ 3-ից երևում է, որ տարածաշրջանի երեք երկրներ՝ Ադրբեջանը, Հայաստանը և Վրաստանը, ունեցել են ՏԱԻ-ի աճ, որոնցից առաջին երկու երկրները նաև ունեցել են վարկանիշային դիրքի բարելավում: Թուրքիայի և Իրանի ՏԱԻ-ն նվազել է, ընդ որում Թուրքիան վարկանիշային աղյուսակում նահանջել է 6 հորիզոնականով:

Աղյուսակ 3. ՏԱԻ-ի արժեքների և հորիզոնականների փոփոխությունը ՀՀ-ում և հարևան երկրներում, 2024-2026թթ.

Երկիր	ՏԱԻ					Վարկանիշային դիրք				
	Մեծությունը			Փոփոխությունը +/-		Մեծությունը			Փոփոխությունը +/-	
	2024	2025	2026	2024-2025	2025-2026	2024	2025	2026	2024-2025	2025-2026
Հայաստան	**64.9**	**65.4**	**67.1**	**0.5**	**1.7**	**47**	**57**	**52**	**-10**	**5**
Վրաստան	68.4	69.0	69.6	0.6	0.6	32	35	35	-3	0
Թուրքիա	56.2	56.1	55.0	-0.1	-1.1	102	111	117	-9	-6
Ադրբեջան	61.6	62.5	64.3	0.9	1.8	70	75	67	-5	8
Իրան	41.2	42.5	41.8	1.3	-0.7	169	169	169	0	0

Հայաստանի հարևաններից ոչ մեկի խումբը նախորդ տարվա համեմատ չի փոխվել. Վրաստանը և Ադրբեջանը Հայաստանի հետ ընդգրկված են *«չափավոր ազատ»* տնտեսություններով երկրների խմբում: Թուրքիան տնտեսապես *«հիմնականում ոչ ազատ»* երկրների խմբում է, իսկ Իրանը՝ *«ճնշված»* երկրների խմբում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով.

- Հայաստանը 2026 թվականին 67.1 միավոր տնտեսական ազատության ինդեքսով (ՏԱԻ) 176 երկրներ ներառող համաշխարհային վարկանիշային աղյուսակում զբաղեցնում է 52-րդ հորիզոնականը: Հայաստանը ներառված է «Եվրոպա» տարածաշրջանում, որի վարկանիշային աղյուսակում 44 երկրների շարքում 28-րդն է: **ՏԱԻ-ով Հայաստանը «Եվրոպա» տարածաշրջանի միջին գնահատականին զիջում է 1.8 միավորով:**

- **Համաձայն ՏԱԻ-ի մեթոդաբանության՝ 2026 թվականին (արդեն հինգ տարի շարունակ) Հայաստանը համարվում է տնտեսապես *«չափավոր ազատ»* երկիր: 2017 թվականին Հայաստանը ներառված էր *«հիմնականում ազատ»* երկրների խմբում:**

- Հայաստանը ՏԱԻ-ի 12 ենթաինդեքսներից 2-ի գծով համարվում է տնտեսապես *«ազատ»* երկիր, 6-ի գծով՝ *«հիմնականում ազատ»*, 2-ի գծով՝ *«հիմնականում ոչ ազատ»*, 2-ի գծով՝ *«ճնշված»*: **Ի դեպ, *«ճնշված»* դասակարգված երկու ենթաինդեքսների՝ «Սեփականության իրավունքի**

պաշտպանության» և «Արդարադատության արդյունավետության» գծով Հայաստանի միավորները զգալիորեն ցածր են դրանց համաշխարհային միջին մակարդակներից:

***«Ճնշված»* դասակարգված երկու ենթաինդեքսներն էլ նույն՝ «Օրենքի գերակայություն» խմբից են: Հայաստանի վիճակն այդ խմբի գծով շարունակում է մնալ բոլոր խմբերից ամենաանբարենպաստը, քանի որ** խմբի վերջին՝ **երրորդ ենթաինդեքսի՝ «Կոռուպցիայի բացակայության» արժեքն էլ 12 ենթաինդեքսների թվում երրորդ ամենացածրն է:**
***«Ճնշված»* դասակարգված ենթաինդեքսներից առաջինը՝ «Սեփականության իրավունքի պաշտպանությունը», որը հաշվարկվում է «մասնավոր (նյութական) սեփականության բռնագրավման ռիսկ», «մտավոր սեփականության պաշտպանվածության մակարդակ» և «պայմանագրերի, սեփականության իրավունքի և օրենքների կիրառելիություն» գործոնների հիման վրա, նախորդ տարվա համեմատ էականորեն նվազել է: Այսինքն՝ Զեկույցը նույնպես փաստում է այս ոլորտի զգալի հետընթացը: Երկրորդ ենթաինդեքսը՝ «Արդարադատության արդյունավետությունը», հաշվարկվում է որպես «դատական համակարգի անկախություն», «դատական գործընթացի որակ» և «հանրային ծառայությունների որակի և քաղաքացիական ծառայության անկախության վերաբերյալ ընկալումներ» ցուցանիշների միջին թվաբանական: Այսինքն՝ Հայաստանի ենթաինդեքսի խիստ ցածր մակարդակը վկայում է այս ուղղություններում ևս առկա լրջագույն խնդիրների մասին:**

«Կարգավորումների արդյունավետություն» խմբի «Աշխատանքի ազատություն» ենթաինդեքսը նախորդ տարվա համեմատ չի փոխվել: Այս հանգամանքը տարակուսելի է, քանի որ գործող բարձրաստիճան պետական պաշտոնյաները շարունակ հայտարարում են, որ ենթաինդեքսի հաշվարկման կարևորագույն ցուցանիշներից մեկը՝ աշխատանքի արտադրողականությունը, վերջին տարիներին շեշտակիորեն աճել է: Ի դեպ, ենթաինդեքսի հաշվարկման համար օգտագործվող մնացած ցուցանիշները, որոնց մեծություններն ամրագրված են օրենսդրորեն, դիտարկվող ժամանակահատվածում չեն փոխվել:

- Համաշխարհային տնտեսությունը 59.9 միջին ՏԱԻ-ով (այն նախորդ տարվա համեմատ աճել է 0.2 միավորով) մոտեցել է *«չափավոր ազատ»* երկրների խմբի նվազագույն շեմին՝ 60 միավորին:

- Վարկանիշային աղյուսակի վերին երեք հորիզոնականներն անփոփոխ են. առաջին տեղում Սինգապուրն է՝ 84.4 միավորով, երկրորդը Շվեյցարիան է՝ 83.7 միավորով, իսկ երրորդը՝ Իռլանդիան՝ 83.3 միավորով: Վարկանիշային աղյուսակի ստորին եռյակը նույնպես չի փոխվել՝ Վենեսուելա (27.3 միավոր), Կուբա (25.2 միավոր) և Հյուսիսային Կորեա (3.1 միավոր):

- ԵԱՏՄ անդամ երկրների թվում առաջատարը 2026-ին Հայաստանն է:

- Հարևան չորս երկրներից Հայաստանը ՏԱԻ-ով զիջում է միայն Վրաստանին:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: